

բաշար հրամանը կատարել բոլոր Եզդի-տոսի մէջ, կոտորելով անդրանիկները, որով՝ փութացուցին Խորայեացիները Եզդիպտոսէն հեռացնելու. և առաւօտուն կանուխ վեց հարիւր հազար Խորայեացի ընտանիքներ, Նեղոսի դելտա կազմող առաջին ճիւղին ջովէն կը փախչէին բոլոր իրենց նախիրներովը, նման իրենց ջովէն սահող Նեղոսի ճիւղին, որ դէպի Աղի լիճը կ'ընթանար, սապէս և Խորայեան բանակը աչձէ Եթովպի անապատը կ'ընթանար. Հոս հարկ կը համարիմ գաղափար մը տալ ամբողջ այս բազմութեան, ծառաններուն և անասնոց, հաւանական հաշույ վրայ հիմնել:

Օրէնք էր Խորայեացւոց մէջ բազմակնութիւնը. և որովհետեւ 600000 այլ յիշատակած ժամանակ Ս. Գիրքը, ուրիշ տեղ մը թուոց գրքին մէջ, և այն երկու ամիս վերջը եղածները 600000 էն աւել կը թուէ առանց զետական ցեղին. հետևարար այս թիւս ոչ թէ ամբողջութիւն մը կը նշանակէ այլ միայն ընտանիք կազմող զուգներ, և աւելի ևս կը հաստատուի երբ թուարկութեանս վրայ կը խօսի քսան տարուէն վեր եղածները յիշատակելով «Առէք զհամար ամենայն ժողովրդեան որդւոցն Խորայելի ըստ ազգս, ըստ տանց նահապետաց, ըստ թուոց յանուանէ ըստ գլխոց նոցա ամենայն արու ի քսանաւենից ի վեր.» (Թիւր Գլ. Ա. 2, 3): Ուստի այս ընտանիքները ունէին կանայք, ըստ օրինաց բազմակնութեան, զաւակներ, ծառաներ և աղախնայք, արջուներ և ոչխարներ և անասուններ: Դնելով թէ մէն մի տուն բաղկացած ըլլայ 10 անձերէ և որոնք ունենան 100 զուգս անասուն, որ համեմատարար միջինէն աւելի նուազ կ'ըլլայ կ'ունենանք 6 միլիոն անձինք և 60 միլիոն նախիր, որոնք կը կազմէին այս Խորայեան բանակը, Եւ ենթադրութիւնն իս հաստատուն է, վասն զի ըստ բացատրութեան Ելից զրոց խիստ մեծ բազմութեան մը երևոյթ ցոյց կուտայ. « Եւ չուեցին որդիքն Խորայելի յիմաստայ ի Սոկըովթ վեց հարիւր հազար այլ հետեակ,

թող զայլ աղիս, և խառնիճարանձ քաղմութիւն ընդ նոսա, և արջառ և ոչխար և անասուն քաղում յոյժ, (Եւր. ԺԲ. 37, 38):

Յան Փարաւոնի՝ ցամառն փոխուած էր, չէր կրնար հանդուրժել որ Խորայեացիները իրենց երկրէն ելնեն. «Ձի՛ գործեցաք զայն զի արձակեցաք զորդիսն Խորայելի զի մի ծառայեցան մեզ »:

Բանակ մը կազմեց 600 երկաթապատ կառքերէ և բազմաթիւ ձիաւորներէ, սկսաւ երթալ Խորայեացւոց ետեւէն, որոնք իրովթի բերանը հասած էին և բանակած:

Իրովթ կը գրուի ըստ Յոյնին «ելթ» մինչ մեր թարգմանութեան մէջ Եպիրոթ գրուած է ուր կայ կամ եպի (էթի) անջատ է Յոյն թարգմանութեան մէջ ըստ այսմ «Και άπηϋρδον εκ Βουδών. και παρενεβαλον էπι τδ στομα ειλϋθϋ» («Եւ» Չուեցին ի Բովթանայ, և բանակեցան սա բերանովն Եպիրովքայ» (Թիւր ԼԳ. 7). արդէն ինչպէս կը տեսնուի էթի թարգմանուած է սա, որով «ելթ» չէ կարելի ըլլալ Եպիրովթ այլ միայն իրովթ. ինծի այնպէս թուի թէ այս հին թարգմանչաց գործը չէ, այլ՝ յետոյ ընդօրինակողներէն ոմանք որոնք լծ առ համարած են և շուրջը անջատեալ մասնիկ «ելթ» անուան կցեր և Եպիրովթ գրեր են:

Այս իրովթն է ըստ իս՝ գետակը կամ այն նշանաւոր ծանծաղուտն ուր հիմա Սուէզի անցըը շինուած է, որ կը միացնէր Աղի լիճը կարմիր ծովուն հետ:

(Շարուժակելի) Զ. Խորու ՍԻՍԱՍ

ՆՈՐ ԱՐՇԱՆՈՅՍ

- Տարին մեռաւ... Նորն է ծննդը.
- Կեանքի նշույլ Յուսարբը.
- Այն, ինձ տրէ՛ք Հաւատք ու Սէր...
- Հայաստանի տունկն է բուսեր:

ԻՂՁՆ ՀՈԳԻԻՍ

Ո՛չ. ես մեռնիլ չեմ ուզեր,
 Կը մեռնիլ ինչպէս շատեր...
 Մընալ կ'ըզմամ անմահ ծեր,
 Մինչ կը մեռնիլ տարիներ:
 Զ. ԳՐԱՆ ԱՍԵՂԵՅԱՆ